# ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

ՀՀ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ
Պողոսյան Դ. (ՀՀ մշակույթի նախարարության «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ, Հայաստան)
poghosyand@yahoo.com

Բանալի բառեր՝ թանգարան, ցուցադրություն, մշակութային տեքստ, թանգարանային հաղորդակցություն, ցուցանմուշ, տեղեկատվություն:

ՀՀ թանգարաններն առօրյա գործունեության ընթացքում կիրառում է սոցիալ-մշակութային գործունեության տարբեր եղանակներ՝ իրենց կրթամշակութային, գիտատեղեկատվական, ժամանցի կազմակերպման ներուժն օգտագործելու ի նպաստ հայկական պատմամշակութային և բնական ժառանգության մի ստվարածավալ հատվածի պահպանությանը, արժևորմանն ու արդիականացմանը: Այս առումով թանգարանային ցուցադրությունն իր պատմական զարգացման տարբեր փուլերում այսօր էլ հանդիսանում է թանգարանի ավանդական հաղորդակցության միջոցը: Վերջինս հիմք է թանգարանի կրթահաղորդակցական հասարակական գործառույթի իրականացման համար:

Հիմնվելով ՀՀ թանգարաններում կատարած դիտարկումների վրա՝ քննարկվում է այն դիրքորոշումը, որ թանգարանային ցուցադրությունը մշակութային տեքստ է և առանց որի անհնար է արդի թանգարանի գոյությունը՝ որպես սոցիալ-մշակութային համակարգ: Ինչպես թանգարանային գործունեության ողջ ընթացքում, այնպես էլ ցուցադրության հիմքում ընկած թանգարանային առարկան ձեռք է

բերում գիտելիքի, զգացմունքների, արժեքների փոխանցման գործառույթ: Ըստ այդմ՝ թանգարանային առարկաները հանդես են գալիս որպես նշաններ և խորհրդանշաններ, ցուցադրությունը՝ առարկայական-տարածական հաղորդագրություն, որը ծառայում է տարբեր մշակութային դիրքերից հանդես եկող սուբյեկտների հաղորդակցությանը և ունի հասարակական-կրթական առաքելություն: Վերջինս այն հիմքն է, որով ընդհանրապես թանգարանը վերածվում է կրթահաղորդակցական միջավայրի, այսինքն՝ մի իմաստավորված տարածության, որի նպատակն է ձևավորել որոշակի աշխարհայացք, փոխանցել արժեհամակարգեր՝ հաշվի առնելով թանգարանային տարաշերտ լսարանի ընկալման տարբեր հնարավորությունները:

ՀՀ թանգարաններում ակիտիվորեն կիրառելի ցուցադրական գործունեության համատեքստում, արդի թանգարանային հաղորդակցության տեսության հիման վրա փորձ է արվում մեկնաբանել այն հիմնական սկզբունքները, մեթոդները, աշխատանքային փուլերը, ինչպես նաև ընկալման եղանակները, որոնք հատուկ են ժառանգության մեկնաբանման սույն թանգարանային միջավայրին:

MUSEUM EXPOSITION AS AN ENVIRONMENT FOR INTERPRETATION OF HISTORICAL-CULTURAL HERITAGE IN THE CONTEXT OF MUSEUMS' ACTIVITIES OF THE REPUBLIC OF ARMENIA

Poghosyan D. (Ministry of Culture of the Republic of Armenia, “Service for the Protection of Historical Environment and Cultural Museum-Reservations” Non-Commercial State Organization, Armenia)